Թ·

ՄԵԼՔԻՍԵԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՌԾԹ = 1611·

(Նոյիրակս առաքէ զՋաքարիա վարդապետ և զԴաւիթ եպիսկոպոս)·

Ի գերայգոյ ի գերակա եւ ի գերագրական ի գերահրաշ ի գերազանց և ի գերաճառ յամենասուրբ Երրորդութենէն, ի յանսկիզբն Հօրէն, ի յանհաս Բանէն, ի Հոգոյն ճշմարտէն, և ի միակութենէն և ի մի ընութենէն և մի գոյութենէն, և ի միապէս բարոյն, ի մի Աստուած գոլոյն, անձամբ և անուամբ բաժանելոյն, այլ ամենայնիւ մի կալոյն· Եւ ի գերագայ ի մեծահամբաւ ի բազմալուր սուրբ մենաստանէս, ի Վաղարշապատու սուրբ աթոռոյս Էջմիածնայ աստուածակազմ լուսոյս· Եւ ի սոցին սպասաւորէ ի Տէր Մելքիսէթ Կաթողիկոսէ ամենայն Հայոց, և ի Տէր Ստեփաննոս վարդապետէ, և ի Տէր Ստեփաննոս եպիսկոպոսէ, և ի Տէր Կարապետ վարդապետէ, և ի Տէր Յովհաննէս վարդապետէ· Նա և Ստեփաննոս արհի եպիսկոպոսէ, այլ և ի Զաքարիայ վարդապետէ, և յայլ միեղէն եղբարցս՝ որ աստ կան հաւագեալ ի Ս· Էջմիածինս· Հասցէ յիսուսաւանդ ողջոյն և առաքելական աւրհնութիւն ի վերայ տիրախնամ և աստուածապահ քաղաքացդ· Նախ և առաջին Իլախաց երկրիդ մայրաքաղաքիդ Իլովա· եպիսկոպոսացդ, քահանայիցդ և Բիծն (երկոտասան) Դատաւորացդ, և պարոն տօլվաթաւորացդ, և հաւասար քրիստոնէիցդ, մեծի և փոքու առ հասարակ· ամէն։ Երկրորդ, Կամենիսու քահանայիցդ և պարոն տօլվաթաւորացդ և հաւասար քրիստոնէիցդ· ամէն։ Երրորդ, Սէչովու քահանայից և պարոն տօլվաթաւորացդ, և բովանդակ քրիստոնէիցդ· ամէն։ Չորրորդ, Եաշու քահանայիցդ և պարոն տօլվաթաւորացդ, և հաւասար քրիստոնէիցդ· ամէն· եւ Ֆռանկաստանու քրիստոնէիցդ առ հասարակ ամենեցուն ամենայնի· ամէն։

Աւրհնեալ է Հայրն Աստուած անեղածին անժամանակ· գովեալ Որդին միածին Բանն Հաւր, ծագումն անճառ, լոյս և ճառագայթ· բարեբանեալ Հոգին Աստուած ճշմարիտ, բխումն անսպառ և բաշխող բարութեան· որպէս աւրհնեաց զդաս հրեշտակաց և զկանս անմարմնոց, նոյն աւրհնութեամբն և զձեզ աւրհնեսցէ արարիչն Աստուած, զդաս և զգումսրս ձեր, զազգս և զտոհմս ձեր, զարկս (զյարկս)և զկայանս ձեր, զտունս և զբնակութիւնս ձեր· Եւ որպէս աւրհնեաց զդրախտն Ադենեա և ի նմա զմարդն առաջին և զմայրն մեր